դիւաններով ին, ես կի տանս մէ կոտրած սկսամի էլ չունիմ», և այս դառը խօսքերը նա կնքեց ուրախ ծիծաղով, կարծես թէ խեղճի ուրախութեան աղբիւրը նրա խեղճութիւնը լինի։ Քանի՛ այսպիսի դատողութիւններ են արտայայտել նրանք, քանի՛ մտքեր են զարթեցրել նրանց գանգատները։ Ճշմարիտն ասած, տեսնելով այս մարդիկներին, լսելով և համակրելով սրբանց, հարկաւոր էր ինձանից շատ և շատ վարպետ նկարիչ, որ կարողանար արժանաւոր գոյներով նկարել սրանց. բայց երբ մարդ ապրելով ժողովրդի մէջ, նրա ուրախութեան հետ ուրախանում է, նրա տրտմութեամբ տրտմում, և այս զգացմունքները նա կարողացել է փոքր ի շատէ պատկերացնել, դա էլ արդարեւ մեծ բաւականութիւն է։

Ինչ և իցէ ժամանակը հասաւ. Պէպօն ներկայացուեցաւ թատրոնում առաջին անգամ 1871 թուի Ապրիլի 30ին։ Պէպօի դերը դու ինքդ կատարեցիր և կատարում ես ցարդ բեմի վերայ։ Դու տուիր նրան շունչ և կենդանութիւն, քո խաղը գերազանցեց զրուածքից, իսկ Պ. Ամերիկեանը, որ ներկայացնում էր Պէպօի հակառակորդի պատկերը, և միւս մասնակցող անձինք իրանց հանճարաւոր խաղով օգնեցին մեզ աւելի պարզ ցոյց տալ հարստահարուած Պէպօի համակրական ոգին։

Այն ծափահարութիւնը, այն ընդունելութիւնը, որ առաջին ներկայացման օրը ստացայ հանդիսականներից թատրոնում, ես արդէն բաժանել եմ քեզ և քո ընկերների հետ. այժմ թոյլ տուր ինձ, սիրելի Գէորգ, խնդրել քեզ ընդունել այս նուազ նուէրս իբրեւ յիշատակ քո չափազանց աշխատութեան և հարկ քո անսահման սիրոյն դէպի մեր թատրոնը։

Քո Գաբրիել Սունդուկեանց

Թիֆլիզ
6 Նոյեմբերի 1876

(*Շարունակելի*)

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

ՎԵՐՋԻՆ ՏԱՂ

Երբ մի առ մի
Աստղերն ամբողջ կը մարին,
Եւ ցերտագին
Զըմրան քամին
Կը փըչէ,
Ցիշէ՛,
Տըրտում հոգի,
Որ այն ատեն նինջն ամենէն անուշն է։

Երբ յոգնած ես
Ու կը դողաս ծաղկի պէս,
Երբ մէջդ է կոր,
Դէմքդ է տըժգոյն,
Մազդ է ձիւն,
Ցիշէ,
Սըրտի հատոր,
Որ քեզ համար ա՛լ ամէն ճիգ ունայն է։

Ուստի մոռցիր
Անպատասխան հարցումն հին.
Քեզմէ լաւերն
Այս ափունքէն
Մեկնեցան.
Պըրկէ աղեղն
Ու արձակէ նետն յետին,
Հապա նետուէ անդունդն ի վար լըռութեան...

ՎԱՀՐԱՄ ՍՕՖԵԱՆ

ՍՄԲԱՏ-ԲԻՒՐԱՏ

ԼԵՌՆԱԿԱՆԻ ՄԸ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ

(ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ)

(Ա. ՇՐՋԱՆ. 1862–1870)

(*Շար. տես Բազմավէպ*, 1935, *էջ* 91)

Ը

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԽԱՂԵՐ

Հարսնիքէն վերջը, նորապսակ հարսին ծնողքն ու ազգականները չէին տեսնուեր ատեն մը, կարծես թէ պաղութիւն մը կը տիրէր մեր և իրենց միջեւ. յարաբերութիւնները դադրած էին. մայրս պատուիրած էր ինձի չերթալ տիկին Թուրվանտի տունը. բայց ես բան մը չէի հասկնար այս խորհրդաւոր վերապահումներէն։

Օր մը մեր տունն սկսան հայս շաղել. այս անգամ հայսը թթուեցուցին. փաթթելով ու տաք պահելով զայն. բան մը, որ Զեթունցիներուն համար անսովոր էր. քանի որ իրենք առհասարակ անխմոր հաց կը գործածեն։ Հայսը խմորուած էր, փոքրիկ հացեր շինեցին, իւղի մէջ տապկեցին, հացիկներ կը կոչէին այդ համեղ խմորեղէնները, զորս խնամիին տունը պիտի տաղէնները, զորս խնամիին տունը պիտի տանէին ուրիշ ընծաներու հետ։ Վերջապէս մայրս հաճեցաւ ինձի իմացընել թէ՝ Բարեկենդան էր։

Տանիքները ծածկուեցան բոլոր հասակներէն. իսկ ես, մեր տան առջեւի տանիքը կեցեր, կը դիտէի. մեծ բազմութիւն մը հաւաքուած էր հոն։ Օդը քիչ մը ցուրտ էր, բայց արեւը՝ փայլուն, ամէն տան առջեւ բայց արեւը՝ փայլուն, ամէն տան առջեւ խումբ խումբ կիներ ու մարդեր, տանիքներուն վրայ կը խաղային ծերեր ու երիտասարդներ։ Զուարճալի էր տեսնել ալեւորներ, որոնք թխագեղ երիտասարդներու հետ կը մրցէին։ Դիտող գեղեցիկ սեռին աչքերը սեւեռուած կը յառէին սովորաբար 18–20 տարու կտրիճներու վրայ, հոն իրենք իրենց կ'ընտրէին ապագային, իրենց սրտին սիրածը։ Սրտի նշանախօսութիւնը կը կատարուէր հոն։ Տեսնել պէտք էր կայտառ պատանիներ, որոնք արիւն քրտինք կը մանէին, աւելի եռանդով կը խաղային, ամէն մէկը ջանալով յաղթել հակառակորդին։ Քաջութիւնը կը փնտռուէր հոն ու լոկ քաջութիւնը որ շատ սուղ էր. որովհետեւ վարձատրութիւնը պիտի ըլլար ճշմարիտ սէրը։ Ես այն ատեն հազիւ հինգ տարու մանկիկ մը, վերջէն, շատ վերջէն հասկցայ թէ՝ բարեկենդանի խաղերը՝ մեր լեռնցիներուն նախասիրած ու չքնաղ առիթներն էին, որոնց շնորհիւը՝ բոլորովին անծանօթ քաջորդի մը կը յաջողի զինքը ծանօթացնել և ստանալ իր կորովութեան վարձը։ Այսպէս, խաղերը կը շարունակէին մինչեւ իրիկուն, ժամը մէկ անգամ խաղը կը փոխուէր։

Ահա՛ խաղերէն մէկ քանիները, որոնք պահուած են տակաւին յիշողութեանս մէջ, տարիներ անցնելէ ետքը։

Խաղացողները հաւասար թիւով կը շարուին դէմ առ դէմ տանիքներուն երկու ծայրերը, մէկ կողմէն կ'արձակուի մէկը,

digitised by A.R.A.R.@